

**«ԱՐՑԱԽ ՀԷԿ»ԲԲԸ
2012թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ)**

Կառավարման մարմինների տարեկան զեկույց

1)Թողարկողի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը՝ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը,որի հետ առնչվել կամ առնչվում է թողարկողը:Այս նկարագիրը պետք է հավասարակշռված և համակողմանի վերլուծության ենթարկի թողարկողի ընդհանուր վիճակը,բիզնեսի արդյունքները և զարգացումը:Վերլուծությունները պետք է հնարավորություն տան պատկերացում կազմել թողարկողի ընդհանուր վիճակի,բիզնեսի արդյունքների և զարգացման մասին՝ներառելով թողարկողի բիզնեսին յուրահատուկ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը էլեկտրաէներգիայի արտադրությունն է:

Ընկերությունը հիմնականում առնչվում է հետևյալ ռիսկերի և անորոշությունների հետ.

Արժույթային ռիսկեր.Այդ ռիսկերը ներառում են ՀՀ դրամի և այլ արժույթների փոխարժեքի զգալի փոփոխությունների հնարավորությունը,ինչպես նաև ՀՀ և ԼՂՀ դրամային կառույցների կողմից միջամտության կամ փոփոխությունների հնարավորությունը:

Բնակլիմայական պայմանների ռիսկեր.Բնակլիմայական պայմաններն ունեն էական ազդեցություն ընկերության գործունեության վրա:Ընկերության հասույթը էականորեն պայմանավորված է ջրի հոսքի ծավալներով:Չնայած նրան,որ նախկին մի քանի տարիների ջրի հոսքի ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս բավականին մեծ ճշտությամբ կատարել կանխատեսումներ,այնուամենայնիվ,բնակլիմայական գործոնով է պայմանավորված ընկերության հասույթի ծավալը և հետևաբար ֆինանսական ցուցանիշները:

Նշված ռիսկերն ու անորոշություններն էապես կազդեն նաև հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

Հաշվետու ժամանակաշրջանում ընկերության արտադրանքը կազմել է 37.968.639 կվտ/ժ էլեկտրաէներգիա, որը մոտ 1.08 անգամ գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արտադրված էլեկտրաէներգիային: Նշված էլեկտրաէներգիայից 26.861.200 կվտ/ժամն արտադրվել է «Սարսանգ»ՀԷԿ-ի միջոցով, իսկ 8.879.108 կվտ/ժամը՝ «Թրդի կասկադ»ՀԷԿ-ի միջոցով, 2.228.331 կվտ/ժամը՝ «Մատադիս 2»ՀԷԿ-ի միջոցով:

Ընկերության վերցրած և մարված վարկերի ծավալները բերված են թիվ 1 աղյուսակում:

«Արցախի ՀԷԿ»ԲԲԸ վարկերի ծավալը 2012թ. 3-րդ եռ.

Աղյուսակ 1

Վարկի կամ փոխառության աղբյուրը	Նոր վարկեր	Մարումներ
ՓԲԸ «Արմավիսբանկ»	100.000 USD	24.999.999,9 AMD 109.727,97 USD 5.550,15 EUR
ՓԲԸ «Արցախբանկ»	200.000 USD	399.616,65 USD
Ֆինանսների նախարարություն	140.000.000 AMD	-
ՓԲԸ «Կոնվերսբանկ»	-	125.000 EUR
«ԲԼԵՍՍ» ՈւՎԿ ՍՊԸ	30.000.000 AMD	

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 2 և թիվ 3 աղյուսակներում.

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2012թ. III եռ. Աղյուսակ 2

Ցուցանիշ	Հազ.դրամ
Արտադրանքի իրացումից հասույթ	1.036.895
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-346.475
Իրացման ծախսեր	-1.626
Վարչական ծախսեր	-148.324
Գործառնական գործունեությունից շահույթ	535078
Շահույթ	302.666
Դեբիտորական պարտք	898.648
Կրեդիտորական պարտք	4.040.550

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2012թ. III եռ.

Աղյուսակ 3

Ցուցանիշի անվանումը	
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով(EPS)	28.42
Սեփական կապիտալի շահութաբերություն(ROE)	2.59%
Ակտիվների շահութաբերություն(ROA)	1.95%
Զուտ շահույթի մարժա(NPM)	29.19%
Կապիտալի համարժեքության գործակից	74.11%
Ֆինանսական կախվածության գործակից	34.94%
Բացարձակ իրացվելության գործակից	0.003
Ընթացիկ իրացվելության գործակից	0.58
Ընդհանուր իրացվելության գործակից	0.61
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	2.34
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	155.98
Պաշարների շրջանառելիության գործակից	11.08
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	32.93
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	0.090
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	4050.71

Հաշվետու եռամսյակի համար Ընկերությունը կառանձնացնելու հետևյալ իրադարձությունները:

• օգոստոսի 09-ին տեղի է ունեցել «Արցախ ՀԷԿ»ԲԲԸ Տնօրենների Խորհրդի նիստ, որտեղ որոշում ընդունվեց՝

1. Թողարկել մինչև 8,000,000 (ութ միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 800 (ութ հարյուր) հատ, 10,000 (տասը հազար) ԱՄՆ դոլար անվանական արժեքով ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր
2. Հաստատել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի մինչև 8,000,000 (ութ միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 800 (ութ հարյուր) հատ ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմանները՝ համաձայն Հավելվածի (կցվում է):
3. Հանձնարարել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ Գլխավոր տնօրենին ապահովել պարտատոմսերի տեղաբաշխման նախապատրաստական աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի («ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ) հետ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ պարտատոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով համապատասխան պայմանագրի կնքումը, պարտատոմսերի ազդագրի մշակումը և ՀՀ կենտրոնական բանկում օրենքով սահմանված կարգով գրանցումը, տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի տեղաբաշխմանն առնչվող այլ գործողությունների իրականացումը:

• սեպտեմբերի 13-ին «Արցախ ՀԷԿ»ԲԲԸ-ի և «Արմավիսբանկ» ՓԲԸ-ի միջև կնքվել է պայմանագիր պարտատոմսերի չերաշխավորված եղանակով տեղաբաշխման մասին, հետևյալ պայմաններով՝

Պարտատոմսի դասը	Անվանական արժեկտրոնային պարտատոմսեր
Պարտատոմսի ձևը	Ոչ փաստաթղթային
Պարտատոմսի այլ բնութագրիչներ	Պարտատոմսերը փոխարկելի չեն, Ընկերությանը վաղաժամկետ մարման իրավունք չեն տալիս
Թողարկման ընդհանուր ծավալը	մինչև 8 մլն ԱՄՆ դոլար

Անվանական արժեքը	10,000 ԱՄՆ դոլար
Քանակը	մինչև 800 հատ
Շրջանառության ժամկետը	36 ամիս
Տեղաբաշխման ձևը	բաց բաժանորդագրություն
Շրջանառության ձևը	ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսի ապահովվածությունը	Ընկերության ընդհանուր գույքով և այլ ակտիվներով
Պարտատոմսերի եկամտաբերության տարեկան տոկոսադրույքը և արժեկտրոնի (տոկոսագումարների) վճարման պարբերականությունը	Արժեկտրոնները հաշվարկվելու են տարեկան 10%, որոնք վճարվելու են կիսամյակային պարբերականությամբ և ՀՀ դրամով:
Վճարման պայմանները (միջոցը և ժամկետները) և կարգը	Պարտատոմսերի դիմաց վճարումները կատարվում են ԱՄՆ դոլարով՝ մինչև պարտատոմսերի տեղաբաշխման ավարտի օրը: Վճարումներն ընդունվելու են կանխիկ և անկանխիկ ձևով՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված բանկային հաշվին:

2)Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Ընկերության կանխատեսումները 2012թ.-ի 4-րդ եռամսյակի արտադրվելիք էլեկտրաէներգիայի ծավալների համար հետևյալն է.

..«Սարսանգ»ՀԷԿ-ի արտադրանքի կանխատեսումներ՝ 40.490,000 կվտ/ժամ

..«Թրդե կասկադ»ՀԷԿ-ի արտադրանքի կանխատեսումներ՝ 4.920,000 կվտ/ժամ

..«Մատաղիս 2» ՀԷԿ-ի արտադրանքի կանխատեսումներ՝ 4.900,000 կվտ/ժամ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Վահրամ Բեգլարյան	տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն	<p>Որպես գլխավոր տնօրեն՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից, ✓ ներկայացնում է Ընկերությունը ԼՂՀ-ում և արտասահմանում, ✓ գործում է առանց լիազորագրի, ✓ տալիս է լիազորագրեր, ✓ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային, ✓ բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ, ✓ Ընկերության Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, ✓ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, ✓ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին, ✓ աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ: <p>Որպես Խորհրդի նախագահ՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ մասնակցել Խորհրդի նիստերին,

		<ul style="list-style-type: none"> ✓ մասնակցել Խորհրդի որոշումների քվեարկությանը:
Սպարտակ Թևոյան	Տնօրենների խորհրդի նախագահ	<ul style="list-style-type: none"> ✓ կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, ✓ գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք, ✓ կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրության վարումը, ✓ նախագահում է ԲԸԺ-ներում:
Էմին Օհանջանյան	Տնօրենների խորհրդի անդամ	<ul style="list-style-type: none"> ✓ մասնակցել Խորհրդի նիստերին, ✓ մասնակցել Խորհրդի որոշումների քվեարկությանը:
Արմեն Գասպարյան	Տեխնիկական տնօրեն	<ul style="list-style-type: none"> ✓ կատարում է Ընկերության էլեկտրահիդրոկայանների էլեկտրաէներգիայի արտադրության պլանավորում և աշխատանքի ռեժիմների մշակում
Ժան Հովհաննիսյան	Ֆինանսական տնօրեն	<ul style="list-style-type: none"> ✓ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության կառավարում
Արայիկ Դավթյան	Գլխավոր հաշվապահ	<ul style="list-style-type: none"> ✓ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների ժամանակին կազմումն ու ներկայացումը, ✓ աջակցում է Ընկերության սեփականության պահպանման, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների խնայողաբար օգտագործման նկատմամբ վերահսկողությանը, ✓ կազմակերպում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ✓ գլխավորում է նախահաշիվների կազմման սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերի նախապատրաստման աշխատանքները: